ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ
13 դեկտեմբերի 2018 թվականի N 308-Ա

ՀԵՐՄԻՆԵ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ, ԱՐՄԵՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ԵՎ ՏԻԳՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թ. N 1239-Ն որոշմամբ հաստատված կարգով՝

կարգադրում եմ.

1. Սյունիքի մարզպետի 2018թ. դեկտեմբերի 13-ի N 305 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի անդամներ՝ մարզպետի տեղակալ Հերմինե Համբարձումյանին, առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ Արմեն Թադևոսյանին, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ Տիգրան Գրիգորյանին մեկ օրով՝ 2018թ. դեկտեմբերի 14-ին գործուղել «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ՝ հանձնում-ընդունում կատարելու նպատակով:

2. Մարզպետարանի սպասարկող անձնակազմի վարորդ Սեյրան Աղալոյանին՝ իրեն ամրակցված ԳԱԶ 3102 մակնիշի 888 ԼԼ 60 պետհամարանիշի ավտոմեքենայով ապահովել տրանսպորտային միջոցով սպասարկումը:

3. Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին՝ սահմանված կարգով ապահովել գործուղման ծախսերի վճարումը:

4. Հանձնաժողովի անդամներին՝ գործուղումից վերադառնալուց հետո, եռօրյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին ներկայացնել հաշվետվություն գործուղման արդյունքների վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

13 12.2018

X

ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN HUNAN 4005640117

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

2018թ.դեկտեմբերի 13
ք. Կապան